ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 141-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կարճելու մասին գործով զեկուցողի առաջարկությունը, **ՊԱՐԶԵՑ.**

1. ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 21.01.2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումում ներկայացրել է մի շարք փաստարկներ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը (2015 թվականի խմբագրությամբ) հակասելը հիմնավորելու համար:

2. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը, ինչպես նաև ներկայացված փաստարկների վերլուծությունը վկայում են, որ դիմումը չի բավարարում հիմնավորված լինելու վերաբերյալ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջին և չի համապատասխանում այդ հարցի կապակցությամբ սահմանադրական դատարանի բազմիցս արտահայտած իրավական դիրքորոշմանը (17.03.2009թ. ՍԴԱՈ-21): Մասնավորապես, նշված օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ: Մինչդեռ դիմողն ըստ էության բարձրացնում է ոչ թե սահմանադրականության հարց և դրան համապատասխան ներկայացնում իր կողմից վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը հիմնավորող փաստարկներ, այլ այդ նորմի և վերջինիս առանձին եզրույթների իրավաբանական և քրեաիրավական բովանդակության բացահայտման, իրավակիրառական պրակտիկայում դրանց միակերպ ընկալման ու կիրառման հարցեր՝ ներկայացնելով դրանք որպես խոչընդոտ՝ իր վարույթում գտնվող քրեական գործով ըստ էության որոշում կայացնելու հարցում: Միաժամանակ, դիմողը բարձրացնում է «իրադրության փոփոխման» պայմաններում «քրեական պատասխանատվությունից ազատելու», ինչպես նաև «պատիժը պայմանականորեն չկիրառելու» քրեաիրավական ինստիտուտների արդյունավետ և իրավաչափ կիրառման հարց՝ չվիճարկելով ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան նորմերի սահմանադրականությունը:

3. Սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ (և հետագա մի շարք այլ որոշումներով (13.11.2012թ. ՍԴԱՈ-80, 08.04.2014թ. ՍԴԱՈ-13, 07.04.2015թ. ՍԴԱՈ-19, ինչպես նաև 05.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-4, 18.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-5, 21.03.2016թ. ՍԴԴԿՈ/1-9, 02.04.2016թ. ՍԴԴԿՈ/1-13 և այլն) վերահաստատված) իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ «... բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի **կիրառման իրավաչափության հարց**, ... ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

4. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև արձանագրել, որ օրենքի, վերջինիս որևէ դրույթի իրավական բովանդակության բացահայտման և միատեսակ կիրառության ապահովման իրավազորությունը սահմանադրորեն վերապահված է եռաստիճան դատական համակարգին և դիմողի կողմից բարձրացված հարցերը լուծելի են օրենքի միատեսակ կիրառման համապատասխան նախադեպի ձևավորման շրջանակներում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 71-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

«ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31 մայիսի 2016 թվականի
ՍԴԱՈ-37